

ՍԱՂՄՈՍ 46

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
<p>Աստված է Իր ժողովրդի ապավենը</p> <p><u>MT ներածություն</u> Կորիսի որդիների շարադրածը, Ալամոթով երգ</p>	<p>Աստված է Իր ժողովրդի ապավենը և ազգերը նվաճողը</p>	<p>Ազգերի վրա Աստծո վերջնական հաղթանակը տոնելու Սիոնի երգը</p>	<p>Աստված մեզ հետ է</p>	<p>Աստված մեզ հետ է</p>
46:1-3	46:1-3	46:1-3	46:1-3	46:1-3p 46:3q
46:4-7	46:4-6 46:7	46:4-7	46:4-6 46:7	46:4-6 46:7
46:8-11	46:8-9 46:10 46:11	46:8-11	46:8-10 46:11	46:8-10 46:11

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այս Սաղմոսը հանդիսացել է սուրբգրային ներշնչանք Մարթին Լյութերի այս օրհներգի համար՝ «Մեր Աստված գորավոր ամբողջ է»:

Բ. Չկա որևէ հայտնի պատմական միջավայր այս Սաղմոսի համար:

Գ. Աստված՝

1. թե՛ ամբողջ է պաշտպանության համար (տես՝ Սաղմ. 46:7,11)

2. թե՛ պատերազմող, ով ամբողջ երկրի վրա դադարեցնում է պատերազմները (տես՝ Սաղմ. 46:9): Ամեն դեպքում Նրա մեծ օրհնությունը միայն Նրա գորությունը չէ, այլ
3. Նրա ներկայությունը (տես՝ Սաղմ. 46:1բ)
4. Նրա տիեզերական նպատակները (տես՝ Սաղմ. 46:10, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ):

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 46:1-3

¹Աստված մեր ապավենն է ու մեր գորությունը,

Հավաստի օգնություն նեղության ժամին:

²Դրա համար մենք չենք վախենալու,

Թեև աշխարհն անցնի, և լեռները ծովի մեջտեղը գցվեն:

³Թեև նրա ջրերը ոռնան ու ալեկոծվեն,

Եվ լեռները սասանվեն դրանց ուռնացումից: Սեյա:

46:1 «Աստված» Սաղմոսների երկրորդ Գիրքը գործածում է *Էլոհիմ* անունն ավելի շատ, քան ՅԱՀՎԵ: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ:

❖ **«մեր ապավենն ու մեր գորությունը»** Սրանք պարբերաբար կրկնվող Աստծո նկարագրություններ են (տես՝ Սաղմ. 14:6, 18:1-2, 40:17, 62:7-8, 142:5):

46:2-3 Սաղմոսերգուի հավատքի հայտարարությունը (այսինքն՝ «չեմ վախենա», տես՝ Սաղմ. 23:4, 27:1) կատարվում է ճգնաժամերի մեջ:

1. թեև աշխարհն անցնի՝ փոխվի
2. թեև լեռները ծովի մեջտեղը գցվեն
3. թեև նրա ջրերը ոռնան (BDB 242, ԴՄԴ) և ալեկոծվեն (BDB 330 I, ԴՄԴ, հնչյունային խաղ)
4. թեև լեռները սասանվեն դրանց ուռնացումից

Նմանատիպ աղետալի իրավիճակները կարող են նկատի ունենալ՝

1. այն, ինչ տեղի է ունենում, երբ ՅԱՀՎԵՆ մոտենում է Իր ստեղծագործությանը (այսինքն՝ «հավվում է», BDB 556, KB 555, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, Սաղմ. 46:6բ, 97:5, Միքիա 1:4, Նաում 1:5)
2. փոխաբերություն նեղության համար (այսինքն՝ «նեղ տեղերը», BDB 865 I, ԻԳՎԿԱՆ ՍԵՌԻ ԳՈՅԱԿԱՆ, տես՝ 2 Օր. 31:17, 21, 1 Թագ. 10:19, Սաղմ. 71:20, Առակ. 1:27):

46:3 Այս համարն ունի երեք ԱՆԿԱՏԱՐՆԵՐ (այսինքն՝ շարունակվող գործողություն)

1. ջրերը ոռնում են – BDB 242, KB 250, *Qal*
2. ջրերը ալեկոծվում են – BDB 330, KB 330, *Qal*
3. լեռները սասանվում են – BDB 950, KB 1271, *Qal*

Հրեական Սերտողության Աստվածաշունչը (Էջ՝ 1333) ասում է, որ «սա դիցաբանական լեզու է, որ վերադառնում է քանանացիների ավանդույթներին: Նախքան այս դիցաբանությունների վերականգնումը, սաղմոսը հաճախ կապվում էր էսկատոլոգիական պատերազմների հետ (այդպես էլ Ռաշին և Ռադակը)»: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՀՄԱ-Ի ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՋՐՀԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ:

Անկոր/խարիսխ Աստվածաշունչը (AB) *Սաղմոսների* շուրջ Միտչել Դահուդի կողմից, կիրառում է *Ռաս Ծանրայի* գրականությունը, որը գտնվել է Ուզարտայում, բացատրելու երբայական պոեզիան և Սաղմոսացի ժանրը: Այս Ուզարտական տեքստերը պոեզիա են *Բահադի* և քանանացիների պանթեոնի վերաբերյալ: Հաճախ Իսրայելը անուններ, պատկերներ և առասպելներ էր վերցնում ազգերից, և դրանք փոխում՝ մեծարելով իրենց ուխտի Աստծուն՝ ՅԱՀՎԵԻՆ, միակ ճշմարիտ Աստծուն:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

❖ **«Սեյա»** Այս տերմինը Սաղմոսը բաժանում է երեք պարբերությունների՝

1. Սաղմ. 46:1-3
2. Սաղմ. 46:4-7
3. Սաղմ. 46:8-11

Հավանական նշանակության համար տես Սաղմ. 3:2-ի գրառումները և Սաղմոսների Ներածությունը, VII.

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 46:4-7

⁴Մի գետ կա, որի վտակները ուրախացնում են Աստծո քաղաքը, Բարձրյալի բնակարանների սուրբ տեղը:

⁵Աստված նրա մեջ է. նա չի շարժվի.

Աստված օգնելու է նրան, այն էլ՝ վաղ առավոտյան:

⁶Հեթանոսները մոլեգնեցին, թագավորությունները շարժվեցին.

Նա Իր ձայնը տվեց, և երկիրը հալվեց:

⁷Չորաց ՏԵՐԸ մեզ հետ է, Հակոբի Աստվածը մեր ապաստանն է: Սեյա:

46:4-7 Այս պարբերությունը նկարագրում է Աստծուն շրջապատող անխռով խաղաղությունը, երբ երկիրը խառնաշփոթի մեջ է (այսինքն՝ Հայտնություն 4-5):

1. մի գետ է շարունակ հոսում (բառացի՝ «ոռոգման ջրուղի», BDB 625, տես՝ Սաղմ. 36:8, 65:9, Եզեկ. 47:1, Հովել 3:18, Չաք. 14:8, Հայտն. 22:1, 17) «Աստծո քաղաքում» (տես՝ Սաղմ. 48:1,8, 87:3, 101:8, Ես. 60:14, Հայտն. 3:12):
2. Աստծո քաղաքը չի սասանվելու (այսինքն՝ շարժվելու), քանի որ ՅԱՀՎԵՆ է նրա մեջ (տես՝ Ովս. 11:9, Չաք. 2:5, Եբր. 11:10, 12:22, 13:14):
3. Աստված օգնելու է նրան (տես՝ Սաղմ. 37:40, Եսայի 41:14) վաղ առավոտյան (կատարյալ ժամադրության նկարագրություն, տես՝ Սաղմ. 5:3, 17:15, 30:5, 90:14): Այս «օգնելու է» խոսքը կապվում է «հեթանոսները/ազգերը մոլեգնեցին» Սաղմ. 46:6ա-ում խոսքի հետ (նույն ԲԱՅԸ Սաղմ. 46:3ա, տես՝ Սաղմոս 2): «Ազգերը» նշվում են դարձյալ Սաղմ. 46:10-ում: Աստծո նպատակները միշտ բովանդակել են ազգերին (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ):
4. Աստծո քաղաքը չի շարժվելու (այսինքն՝ կայունության և հարատևության նկարագրություն):

46:4բ

NASB, JPSOA

NKJV

NRSV

TEV

NJB

REB

LXX

«սուրբ բնակարան»

«խորանի սուրբ վայրը»

«սուրբ բնակատեղին»

«սուրբ տունը»

«այն սրբացնում է բնակությունը»

«սրբացրեց իր ծածկերը»

«սուրբ բնակությունը»

MT (BDB 1015) տալիս է՝

1. խորան – Ելից 25:9, 26:30, 38:21, 40:34-35, Թվոց 9:18,22 (այսինքն՝ «ժողովրդի վրանը»), Սաղմ. 78:60
2. բնակության վայրը
ա. Կորխի (այսինքն՝ վրաններ) – Թվոց 16:24, 27
բ. Հակոբի – Սաղմոս 87:2
գ. ՅԱՀՎԵԻ (այսինքն՝ տաճարը) – Սաղմ. 26:8, 74:7
դ. ՅԱՀՎԵԻ (սակայն ՀՈԳՆԱԿԻ, այսինքն՝ տաճարի լեռան վրա գտնվող բոլոր կառույցները) – Սաղմ. 43:3, 84:1, 132:5,7, Եզեկ. 32:27

ՀՈԳՆԱԿԻՆ հնարավոր է վերաբերում է՝

1. Տաճարի բոլոր կառույցներին
2. ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՀՈԳՆԱԿԻՆ (այսինքն՝ ամենասուրբը)

Թարգմանություններից կարող եք տեսնել, որ ոմանք փոխում են «սուրբ» (ԱԾԱԿԱՆ, BDB 872) ԲԱՅԻ՝ «սրբացնել» (LXX, Վուլգատտա, NJB), որը միայն ձայնավորների փոփոխություն է:

❖ «Բարձրյալը» Աստծո այս անունը (*Էլյոն*, BDB 751 II, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ), կիրառվում է Ծննդ. 14:18-22, Թվոց 24:16, և 2 Օր. 32:8-ում, սակայն ամենաշատը (16 անգամ) Մաղմոսներում և Դանիելի 7-ում (4 անգամ): Հիմնական նշանակությունը «բարձրն» է: Այն հիմնականում կիրառվում է ոչ իսրայելացիների կողմից:

46:6 Նկատե՛ք հակադրությունը՝

1. ազգերը՝ հեթանոսները մոլեգնեցին, Սաղմ. 46:6ա (ապարդյուն)
2. ՅԱՀՎԵԻ ձայնը՝ Սաղմ. 46:6բ (ազդեցիկ)

«Հավիեց» ԲԱՅԸ (BDB 556, KB 555, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) կարող է կիրառվել՝

1. թշնամիների համարձակության համար փոխաբերական իմաստով – Ելից 15:15, Հեսու 2:9, 11, 24, Եսայի 14:31
2. դատաստանի համար՝ փոխաբերական իմաստով – Ամովս 9:5
3. բառացիորեն (այսինքն՝ երկրի վերջնական մաքրումը) – 2 Պետ. 3:10

46:7 Այս նույն խոստումը՝

1. Չորքերի ՅԱՀՎԵՆ մեզ հետ է (տես՝ Սաղմ. 24:10, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, տես՝ Թվոց 14:9, 2 Մնաց. 13:12):
2. Հակոբի Աստվածը մեր ապաստանն է (տես՝ Սաղմ. 9:9, 48:3, 59:9, 16, 17)

կրկնվում է Սաղմ. 46:11-ում շեշտադրության համար: Այս հայտարարությունները սաղմոսերգուի հույսն են և ՅԱՀՎԵԻ խոստումները Իր ժողովրդին:

❖ «մեր հետ է» Սա ամենամեծ խոստումն է (տես՝ Թվոց 14:9, 2 Մնաց. 13:12, Սաղմ. 9:10, 37:28, 94:14, Եբր. 13:5 [2 Օրինաց 31:6, Հեսու 1:5-ից]): Մենք Աստծո կարիքն ունենք:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 46:8-11

⁸Եկե՛ք, տեսե՛ք ՏԻՐՈՉ գործերը,
Թե ինչպիսի ավերումներ է Նա կատարել երկրի վրա,
⁹Մինչև երկրի ծայրերը Նա դադարեցնում է պատերազմները .
Կոտրում է աղեղը, կոտրատում է նիզակը,
Ռազմակառքը կրակի է տալիս:
¹⁰Հանդարտ մնա, և իմացի՛ր, որ Ես Աստված եմ .
Ես պիտի բարձրացվեմ հեթանոսների մեջ,
Ես պիտի մեծարվեմ երկրի վրա:
¹¹Չորաց Տերը մեզ հետ է,
Հակոբի Աստված մեր ապավենն է: Սեղա:

46:8-11 Այս պարբերությունը հայտնում է Աստծո նպատակը: Նկատե՛ք Սաղմոս 46:8-ի երկու ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ և 46:10-ի համագորը:

1. եկե՛ք – BDB 229, KB 246, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, Սաղմ. 46:8
2. տեսե՛ք – BDB 302, KB 301, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, Սաղմ. 46:8, տես՝ Հոր 23:9, Սաղմ. 36:2, Եսայի 26:11, 33:17, 20, 48:6
3. դադարեք (ՅԱՀՎԵՆ խոսում է Սաղմ. 46:10-ում) – BDB 951, KB 1276, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, Սաղմ. 46:10 (այսինքն՝ համատեքստում կոչ է արվում աշխարհին դադարեցնել պատերազմերը)

4. իմացե՛ք – BDB 393, KB 390, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, Սաղմ.46:10 (այսինքն՝ ՅԱՀՎԵԻ գորու-
թյունը և ազատագրումը. սա աստվածաբանորեն զուգահեռ է կես 2-ին):
ՅԱՀՎԵՆ է բոլոր պատերազմները դադարեցնողը մինչև երկրի ծայրերը: Նոր օր է գալիս (Խաղաղու-
թյան Իշխանը, տես՝ Ես. 9:6, 66:12, Հովի. 14:27, 16:33, 20:19): Ողորմած Աստծուն մեծարելու և ս մեկ
օր: Բոլոր ազգերը ճանաչելու են Նրան (տես՝ Եսայի 2:2-4, 25:6-9, 56:6-8, Եփես. 2:11-3:13):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

46:8 «ավերումներ» TEV թարգմանությունը տալիս է «եկեք և տեսեք, թե ՏԵՐԸ ինչ է արել: Տեսե՛ք, թե ինչ սքանչելի բաներ է Նա արել երկրի վրա»: «Ավերումներ» (BDB 103 II) բառը Սաղմոսներում միայն երկու անգամ է կիրառվում (այստեղ և Սաղմ. 73:19), որտեղ այն նշանակում է կործանում: Ելիցի դեպքերը կոչվում են «հրաշալի բաներ» (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՐԱՇԱԿԻ ԲԱՆԵՐ), որպես-
զի ռազմական կործանումները կարողանան բնութագրվել այս բառով: Այս բառը ամենահաճախ հանդիպում են Երեմիայում (24 անգամ) և դրանք բոլորն էլ մատնանշում են կործանում, ավերում, սարսափ, ամայացում: Ըստ երևույթին ՅԱՀՎԵՆ կանգնեցնում է պատերազմը, հաղթելով ազգերի ռազմական ուժերին (տես՝ Սաղմ. 46:9, Սաղմոս 2):

46:9

NASB, NKJV	«կառքերը»
NRSV, TEV, NJB, REB, LXX	«վահանները»
JPSOA	«սայերը»

Հայտնի չէ, թե որն է երբայերեն արմատը՝

1. «շրջանակ» - BDB 222, לָגַע לִגְעָ (DSS, «կլոր վահան», 1QM6:15)
2. «անվավոր կառք» - BDB 722, הִלָּע (երբեք MT չի տալիս որպես ռազմական)

Այս համատեքստում «կլոր վահանը» համապատասխանում է լավագույնս:

46:11 Չուգահեռականությունը պահանջում է ընդհանուր շեշտադրում: Հրաշալի քաղաքը բոլորի համար է (այսինքն՝ Նոր Երուսաղեմը, տես՝ Հայտնություն 21-22):

«Երկրի» համար (Սաղմ. 46:2,6,8,9,10) տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈՂ, ԵՐԿԻՐ, ԵՐԿՐԱԳՈՒՆԴ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Արդյո՞ք Սաղմոս 46:2-3-ի նկարագրության մեջ տեսարանը վերջին ժամանակներից է, թե քանանացիների դիցաբանությունից:
2. Բացատրե՛ք Աստծո քաղաքից հոսող գետի նշանակությունը:
3. Ինչպե՞ս է Սաղմոս 46:6 նման Սաղմոս 2-ին:
4. Ո՞ւմ է խոսում ՅԱՀՎԵՆ Սաղմ. 46:10-ում:
5. Արդյո՞ք Սաղմ. 46:10 ազգերի պարտության մասին է, թե ազգերի Աստծո ժողովրդի մեջ ներառվելու մասին: